ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՃԿԱԼՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՎԱՀԱՆԻ

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ)

Ը.00.01.-«Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՈՎՍԵՓ ԻՎԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ
ԷԴՈՒԱՐԴ ՆՈՐԱՅՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 13^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009. ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի նոյեմբերի 15-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ա.Հ.Առաքելյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսագիտական մտքի զարգացման ներկա փուլում հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները դարձել են տնտեսագիտական ուսումնասիրությունների կենտրոնական և առանցքային հիմնահարցերից մեկը: Տնտեսագիտական գրականության ներկա վերլուծությունների մեջ առաջնային տեղ է հատկացվում հարկաբյուջետային քաղաքականությանը՝ պայմանավորված շուկայական տնտեսության զարգացման ներկա մարտահրավերներով և գործարար պարբերաշրջանների կարգավորման ժամանակ պետության հարկաբյուջետային քաղաքականության դերի մեծացման փաստով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և առաջացած հարկաբյուջետային ճգնաժամը ցույց տվեցին, որ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում տնտեսության կարգավորման հարկաբյուջետային լծակներն առավել այժմեական են քան երբևէ: 2009 թվականից հետո ճգնաժամն իր բացասական հետևանքները թողեց նաև ՀՀ տնտեսությունում և հարկաբյուջետային միջավայրում: Արդյունքում մակրոտնտեսական կայունության վերականգնումը և կայուն տնտեսական աճի ապահովումը վերջին տարիներին դարձել են ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակները: Այսպիսով, արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության նախագծումն ու իրականացումը կարևոր նախապայմաններ են հանդիսանում վերոնշյալ նպատակների իրականացման համար:

Միաժամանակ, տնտեսագիտական հետազոտությունների ներկա ժամանակաշրջանում տեսական վերլուծաբանների մոտ մեծացել է հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրությունը՝ պայմանավորված տնտեսական նոր կոնսենսուսում այս քաղաքականության ունեցած նոր դերակատարման հետ, ինչն անհրաժեշտություն է առաջացնում վերանայելու ֆիսկալ գործիքների օգտագործման արդյունավետությունը տնտեսական ճգնաժամերի ժամանակ, ինչպես նաև բացահայտելու դրամավարկային քաղաքականության հետ կոորդինացման նոր մեխանիզմների անհրաժեշտությունը և կիրառման հիմնական ուղղությունները:

Այս հիմնահարցերն արդիական են նաև Հայաստանի համար, քանի որ ներկայումս մեր երկիրը գտնվում է հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների կարևոր և վճռորոշ փուլում, երբ ֆիսկալ քաղաքականության մեխանիզմները, հարկային օրենսդրության բարեփոխումները, լիարժեք ծրագրային բյուջետավորման համակարգի առկայությունը, պետական պարտքի կառավարման կայունությունն ու հուսալիությունն անհրաժեշտ հիմնական պայմաններն են հանդիսանում երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ ապահովելու համար: Ներկայումս առկա մարտահրավերները տնտեսական քաղաքականություն մշակողների և տեսաբանների համար պահանջում են

հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրների բացահայտման և վերլուծության նորագույն մեթոդների ու մեխանիզմների կիրառություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության թեմայի վերլուծության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները, որոնց շրջանակներում իրականացվել է հետազոտությունը: Դրանք են.

- Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեսական մոտեցումների ուսումնասիրությունը և հարկաբյուջետային քաղաքականության նոր դերի բացահայտումը տնտեսական նոր կոնսենսուսում:
- Հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական էֆեկտների վերլուծությունը և քաղաքականության արդյունավետության գնահատումը տարբեր տեսական մոտեցումների շրջանակներում:
- Զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների ուսումնասիրությունը և դրամավարկային քաղաքականության հետ կոորդինացման մեխանիզմների պարզաբանումը:
- ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության և հարկաբյուջետային համակարգը բնութագրող հիմնական ֆիսկալ ցուցանիշների վերլուծությունը:
- Իմպուլսների սահմանափակման մեթոդով գնահատվող VAR մոդելավորման միջոցով հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը ՀՀ-ում և համապատասխան հարկաբյուջետային բարեփոխումների ներկայացումը:

Այսպիսով, առաջադրված նպատակներին հասնելը ենթադրում է Հայաստանում հարկաբյուջետային քաղաքականության համապարփակ բնութագրման իրականացում, ֆիսկալ գործիքների վերլուծություն, որոնք զարգացող երկրներն օգտագործում են, և Հայաստանում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության համար անհրաժեշտ բարեփոխումների համար հիմնական ուղղությունների սահմանում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հարկաբյուջետային համակարգն է և պետության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը:

Հետազոտության առարկան հանդիսանում է հարկաբյուջետային քաղաքականության, մակրոտնտեսական փոփոխականների և տնտեսական աճի միջև եղած փոխազդեցություններն ու կապերը:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, ինչպիսիք են՝ վերլուծության, գիտական վերացարկման, համադրման, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Միաժամանակ օգտագործվել են վիճակագրական, մաթեմատիկական, գործընթացների գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Հետազոտության համար տեսական հիմքեր են հանդիսացել տնտեսագիտական գրականության հայրենական և համաշխարհային հայտնի հեղինակների աշխատություններն ու գիտահետազոտական հոդվածները, ՀՀ օրենքները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակված զեկույցները,

աշխատանքային փաստաթղթերը, տեղեկագրերը, վիճակագրական տվյալների բազաները և տվյալների այլ շտեմարաններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը հանդիսանում է հետևյալը.

- Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տարբեր տեսությունների և հետազոտությունների զուգահեռ վերլուծությունների արդյունքում առանձնացվել և բացահայտվել են պետության հարկաբյուջետային քաղաքականության այժմեական հայեցակարգերը, միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերջին տարիների տնտեսական զարգացումները և պետության մակրոտնտեսական կարգավորման գործիքների հարաբերակցության փոփոխությունները, առաջ է քաշվել տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը՝ պայմանավորված ներկա ժամանակաշրջանում ֆիսկալ գործիքների կիրառման ընդլայնման և դրանց արդյունավետության մեծացման հանգամանքներով:
- Ցածր գնաճային և կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով բացահայտվել են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման և դրա հետ կապված ինստիտուցիոնալ ու գործնական կարգավորումների հիմնական տրամաբանությունը, որը պետք է լինի ՀՀ-ում կենտրոնական բանկի և կառավարության կողմից մշակվող քաղաքականությունների հիմքում՝ ապահովելու տարամետ մակրոտնտեսական միտումների բացակայությունը և ներդաշնակ ու փոխադարձ համաձայնեցված թիրախների առկայությունը:
- Բացահայտելով վերջին տարիներին զարգացող երկրների համար հարկաբյուջետային համակարգի հիմնական մարտահրավերները և առաջնահերթությունները՝ ներկայացվել են ՀՀ-ում հարկային քաղաքականության մշակման և հետագա բարեփոխումների հիմնական ուղղությունները, քաղաքականության արդյունավետ կիրառման համար առաջնային սկզբունքները և նախապայմանները:
- Իրականացնելով ՀՀ հարկաբյուջետային միջավայրի և ֆիսկալ ցուցանիշների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ներկայացվել են տնտեսական կայունության և միջնաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ հարկաբյուջետային ընդլայնման և/կամ կոնսոլիդացիայի համադրման հիմնական ուղղությունները, հիմնական մակրոտնտեսական ռիսկերը, կանխատեսվել է ֆիսկալ գործիքների կիրառման արդյունավետությունը միջնաժամկետ հեռանկարում:
- Միջազգային պրակտիկայում ընդունված էկոնոմետրիկ վերլուծության VAR մոդելավորման միջոցով ներկայացվել և գնահատվել են ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարներ՝ բացահայտելու միջնաժամկետ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ քաղաքականության հիմնական ուղղությունները: Մասնավորապես, ընտրված մոդելի շրջանակներում կիրառվել է ֆիսկալ իմպուլսների սահմանափակման մոտեցումը վերոնշյալ խնդիրը բացահայտելու համար:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության

արդյունքները կարող են կիրառվել ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության մշակման և կիրառման գործընթացում, ինչպես նաև ներկայումս իրականացվող համակարգային բարեփոխումների շրջանակներում: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև տեսական և էմպիրիկ վերլուծությունների ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախուսության հիմնական արդյունքները և դրույթները քննարկվել են ՀԱԱՀ, Կրակովի Յագիելոնյան համալսարանի, Բանատի գյուղատնտեսական համալսարանի մասնագետների և հետազոտողների հետ: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են կիրառվել ՀՀ ֆինասների նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից հարկաբյուջետային քաղաքականության և առհասարակ ՀՀ Կառավարության կողմից հարկաբյուջետային պլանավորման գործընթացում: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական 8 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը, առանց հավելվածների, կազմում է 164 էջ, պարունակում է 2 աղյուսակ, 19 գծապատկեր և 11 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակները և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվել է ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Հարկաբյուջետային քաղաքականության էությունը և տեսական հիմունքները»** գլխում ուսումնասիրության հիմնական առարկան եղել է հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների ուսումնասիրությունների և հետազոտությունների ներկայացումը, հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական հետևանքների և արդյունավետության վերլուծությունը՝ միաժամանակ ներկայացնելով տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը:

Ինչպես հայտնի է, պետական ֆինանսական ռեսուրսները՝ պետական բյուջեն, հարկային լծակները, որպես տնտեսական գործունեության վրա ազդելու գործիք, պաշտոնապես սկսվել են կիրառվել 1929 թվականին մեծ դեպրեսիայի ժամանակ: Իրականում, միայն 1930-ականների ճգնաժամի ժամանակ որոշ երկրների կառավարություններ սկսեցին պետական բյուջեն դիտարկել որպես տնտեսական քաղաքականության գործիք: 2008 թվականի ֆինանսական ճգնաժամի ընթացքում և հետագայում, առավել առաջադեմ երկրները նույնպես իրականացրել են մի շարք ակտիվ ֆիսկալ քաղաքականության միջոցառումներ այդ ճգնաժամի հետևանքների

մեղմացման համար:

Այսպիսով, հարկաբյուջետային քաղաքականության այս լայնածավալ գործնական կիրառությունը բարձրացնում է մի շարք հիմնարար հարցեր: Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս են զբաղվածության խնդիրներն ազդում հարկերի և պետական ծախսերի սահմանման վրա: Ե՞րբ է անհրաժեշտ կառավարության կողմից գործարկել ֆիսկալ խթանման ծրագրեր: Ի՞նչն է որոշում այդ ծրագրերի չափը և ինչպե՞ս է այն կախված պետության պարտքային դիրքից: Ինչպիսի՞ն պետք է լինի հարկային կրճատումների և պետական ծախսերի ավելացման զուգակցումն այդ ծրագրերում: Ինչպիսի՞ն կլինի հարկաբյուջետային քաղաքականության ընդհանուր արդյունավետությունը՝ գործազրկության մակարդակի նվազեցման առումով: Որո՞նք են հարկաբյուջետային քաղաքականության երկարաժամկետ ազդեցությունները: Որո՞նք են հարկաբյուջետային քաղաքականության կայունացման կամ հակացիկլային հատկանիշները: Այս և մի շարք այլ հարցերի պատասխանները շարունակվում են մնալ որպես տեսաբանների հետազոտությունների առանցքային հարցեր:

Ատենախոսության մեջ հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական ազդեցությունների վերաբերյալ մեր կողմից իրականացված տեսական գրականության վերլուծությունն ընդգրկում է պարզ քեյնսյան մոդելը, փակ և բաց տնտեսության IS-LM մոդելները, ռացիոնալ սպասումներ պարունակող պահանջարկի մոդելները, ռիկարդյան համարժեքության տեսությունը, տոկոսադրույքների արժանահավատություն ու անորոշություն մոդելները և առաջարկով պայմանավորված (ներառյալ նոր դասական) մոդելները: Այս ուսումնասիրություններից հանգել ենք այն եզրակացության, որ հարկաբյուջետային մուլտիպլիկատորները հակված են լինել դրական և, հնարավոր է բավականին մեծ, երբ՝

- տնտեսությունում առկա են ավելցուկային հզորություններ և տնային տնտեսություններն ունեն սահմանափակ ժամանակային հորիզոններ կամ սահմանափակված են իրացվելիությամբ,
- պետական ծախսերի ավելացումը չպետք է փոխարինի մասնավոր ծախսերին, քանի որ այն պետք է նպաստի աշխատուժի և կապիտալի արտադրողականության բարձրացմանը, իսկ հարկերի ցածր մակարդակը բարձրացնում է աշխատուժի առաջարկը և/կամ ներդրումների ավելացումը:
- պետական պարտքը պետք է պահպանվի ցածր և կառավարելի մակարդակի սահմաններում, և կառավարությունը չպետք է բախվի ֆինանսավորման խոչընդոտների հետ:
- միևնույն ժամանակ, պետք է առկա լինի ուղեկցող դրամավարկային ընդլայնում՝ սահմանափակ գնաճային հետևանքներով:

Ատենախոսությունում ներկայացվել են հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների մոտեցումները՝ գնահատելով հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը և ընդլայնողական կամ կոնսոլիդացման քաղաքականության ուղղությունները: Այսպիսով, նեոքեյնսյան, հետքեյնսյան և մոնետարիստական մոտեցումները կարող են բոլորը դիտարկվել որպես «քեյնսյան ոգով» առաջնորդվող: Քանի որ նրանք կիսում են AD-

ի ձևավորման միասնական մոտեցումը արտադրության մակարդակի որոշման համար. չկա զբաղվածության և արտադրության բնական մակարդակը, որին տնտեսությունը ձգտում է, և աշխատանքի արդյունքներն անջատված են աշխատուժի առաջարկի կորից: Նեոքեյնսյան և հետքեյնսյան մոդելներում մոնետար և պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող հարկաբյուջետային քաղաքականությունն ունի մշտական ազդեցություն զբաղվածության և արտադրության վրա: Այնուամենայնիվ, պարտատոմսերի միջոցով ֆինանսավորվող ֆիսկալ քաղաքականությունը ոչ մի կերպ ազդեցություն չի ունենում մոնետարիստական մոդելի դեպքում, քանի որ ինչպես արդեն նշել ենք նրանց կարծիքով «Փողը դա այն ամենն է, ինչն իմաստ ունի»[1]: Իսկ դասական, նոր դասական և նոր քեյնսյան մոդելները կարելի է դիտարկել որպես «դասական տեսության ոգով»: Քանի որ այս պարագայում էլ նրանք կիսում են դասական մոտեցումն արտադրության որոշման համար և չեզոք դիրքորոշում ունեն արտադրության բնական մակարդակի և զբաղվածության մակարդակի հետ կապված, որին տնտեսությունը ձգտում է:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունները, կարող ենք եզրակացնել, որ հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է շատ խայտաբղետ անցյալ: Քեյնսի հեղափոխական տեսական մոտեցումը կարևոր տեղ է հատկացրել հարկաբյուջետային քաղաքականության համար, որը հետագայում քանդվել է գերիշխող տեսությամբ (mainstream): Եվ մինչ հիմնական տեսությունը փորձում էր հարկաբյուջետային քաղաքականության համար ապահովել որոշակի դեր, հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պայքարում էին քեյնսյան գաղափարների համար: Արդյունքում որքանո՞վ է տնտեսական նոր կոնսենսուսը ֆիսկալ քաղաքականության համար վերականգնում որոշակի դեր, դա հստակ չէ: Այն միայն վերահաստատում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունն ըստ էության գնաճային է: Հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պաշտպանել են հարկաբյուջետային քաղաքականությունը, որպես մակրոտնտեսական կայունության և լրիվ զբաղվածության ապահովման քաղաքականություն՝ ենթադրելով, որ կառավարվող գների և դրամական զանգվածի պայմաններում, որտեղ հիմնարար անորոշությունը, հարկադիր գործազրկությունը և տնտեսական ներուժի թերօգտագործումը նորմա են, ապա հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ գնաճային ոչինչ չկա: Փաստորեն, դա կարող է ծառայել որպես կայունացման գործիք, որը վերականգնում է հարկաբյուջետային քաղաքականության և լրիվ զբաղվածություն միջև կապը:

Ամփոփելով վերոնշյալ ուսումնասիրությունները և հաշվի առնելով վերջին տարիների տնտեսական զարգացումները և պետության մակրոտնտեսական կարգավորման գործիքների հարաբերակցության փոփոխությունները՝ անհրաժեշտություն ենք համարում առաջ քաշել տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության ունեցած դերի վերանայման հարցը՝

[1] Palley Thomas I., 2012 “Keynesian, Classical and New Keynesian Approaches to Fiscal Policy: Comparison and Critique”, New America Foundation, Washington DC, p.18

պայմանավորված ներկա ժամանակաշրջանում ֆիսկալ գործիքների կիրառման ընդլայնման և դրանց արդյունավետության մեծացման հանգամանքներով, որոնք կարևոր հանգամանքներ են հանդիսանում տնտեսական նոր կոնսենսուսում հարկաբյուջետային քաղաքականության իրական տեղը և դերը գնահատելու համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հարկաբյուջետային քաղաքականության մակրոտնտեսական կարգավորման բնույթը»** գլխում ուսումնասիրություններ են կատարվել երկարաժամկետ տնտեսական աճի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատման ուղղությամբ, միաժամանակ կարևորելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման անհրաժեշտությունը: Ամփոփ ներկայացվել է զարգացող երկրներում հարկաբյուջետային քաղաքականությունը և մակրոտնտեսական կայունության համար անհրաժեշտ հիմնական նախապայմանները:

Հարկաբյուջետային և մակրոտնտեսական կայունությունը միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական աճի համար կարևոր նախապայմաններ են հանդիսանում: Հարկաբյուջետային քաղաքականության անորոշությունը և պետական պարտքի բարձր մակարդակը խաթարում են մասնավոր ներդրումները և դանդաղեցնում են տնտեսական աճը: Անշուշտ, մակրոտնտեսական անկայունության հետևանքով ստեղծված քաղաքականության անորոշությունը տնտեսական աճի վրա ազդում է ներդրումների վերադարձի փոփոխականության, անորոշության պատճառով և ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխման միջոցով, քանի որ գնային ազդանշաններն աղավաղված են: Սա կարևորում է ավտոմատ կայունարարների դերը մակրոտնտեսական փոփոխականության նվազեցման գործում. ֆիսկալ շրջանակները, որոնք նպաստում են ավտոմատ կայունարարների համաչափ գործունեությանը վերացնում են պետական պարտքի կուտակման կարևոր աղբյուրը և նպաստում միջնաժամկետ տնտեսական աճին[2]:

Այսպիսով, Ֆիսկալ կոնսոլիդացիայի տեմպը կարևոր է միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական աճի համար: Տնտեսագիտական գրականություն մեծ մասը՝ հիմնականում նախաճգնաժամային շրջանը, ընդգծում է ընդլայնողական ֆիսկալ ճշգրտումների կարևորությունը ոչ միայն զարգացած տնտեսությունների, այլ նաև զարգացող շուկայական տնտեսությունների և ցածր եկամուտ ունեցող երկրների համար[3]:

Այնուհետև ատենախոսությունում անդրադարձ է կատարվել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման հիմնախնդրին՝ կայուն և ցածր գնաճային տնտեսական աճ ապահովելու համար:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությյունների արդյունավետ կոորդինացման համար անհրաժեշտ են մի շարք առաջնային պայմաններ: Առաջին, քաղաքականությունների կայունությունը պետք է ապահովվի

---

[2] Fischer, S., 1993, “The Role of Macroeconomic Factors in Growth,” Journal of Monetary Economics, 32, pp. 485-512.

[3] De Long, J.B., and L. Summers, 2012, “Fiscal Policy in a Depressed Economy” Brookings Papers on Economic Activity, Economic Studies Program, The Brookings Institution, Vol. 44(1), pp. 233-297.

այնպես, որ յուրաքանչյուրի միջնաժամկետ ուղին կայուն լինի: Երկրորդ, երկու քաղաքականությունների արժանահավատությունը պետք է պահպանվի հասարակության սպասումների կայունացման միջոցով: Երրորդ, պետք է հաշվի առնել քաղաքականությունների ճշգրտման գործողությունների տարբեր ժամկետները: Այլ կերպ ասած, հարկաբյուջետային դիրքորոշման ճշգրտումը տևում է երկար ժամանակ, մինչդեռ մոնետար դիրքերը հաճախակիորեն կարող են կարգավորվել: Չորրորդ, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների նպատակներն ու քաղաքականության ուղղությունները պետք է համատեղ որոշվեն: Իրոք, ցանկացած տնտեսության մեջ քաղաքականությունների կոորդինացիան անհրաժեշտ է՝ անկախ նրա զարգացման փուլից: Այնուամենայնիվ, այն տարբերվում է՝ ելնելով տարբեր հանգամանքներից, որոնք բնութագրում են յուրաքանչյուր տնտեսության ֆինանսական շուկաների զարգացման աստիճանը, փոխարժեքի ռեժիմը և այլ ինստիտուցիոնալ միջոցառումներ[4]:

Այսպիսով, ամփոփելով եզրակացնում ենք հետևյալը, որ ցածր գնաճային, կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով մեր կողմից ներկայացվել են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման և դրա հետ կապված ինստիտուցիոնալ ու գործնական կարգավորումների հիմնական մեխանիզմների և կարգավորումների համակարգը, որը պետք է լինի ՀՀ-ում կենտրոնական բանկի և կառավարության կողմից մշակվող քաղաքականությունների հիմքում՝ ապահովելու տարամետ մակրոտնտեսական միտումների բացակայությունը և ներդաշնակ ու փոխադարձ համաձայնեցված թիրախների առկայությունը, երաշխավորելով, որ հարկաբյուջետային քաղաքականությունը չի հանդիսանում գնաճի հիմնական աղբյուրը և, միևնույն ժամանակ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը պետական բյուջեի վրա փոքր է:

Ընդհանրապես, զարգացող երկրների համար կայուն հարկաբյուջետային քաղաքականության ապահովման համար կարևոր նախապայմաններ են հանդիսանում համապատասխան ֆիսկալ տիրույթի առկայությունը և գործող կայուն հարկաբյուջետային կանոնների համակարգը: Այս համատեքստում մեր նպատակն է եղել բացահայտել այն ուղղությունները, որոնք այլընտրանքային հնարավորություններ են ստեղծում զարգազող երկրների համար ֆիսկալ տիրույթի ընդլայնման համար, որոնք կարևոր պայմաններ են երկարաժամկետ կայուն տնտեսական աճի համար՝ միևնույն ժամանակ պատասխանելով հետևյալ հարցերին. ինչպե՞ս կարող են հարկաբյուջետային կանոնները մեղմացնել հակապարբերաշրջանային քաղաքականության գործընթացը և զարգացող երկրներում ինչպիսի՞ կանոններ կամ պայմաններ կարող են դրանք առավել արդյունավետ դարձնել:

Ատենախոսության երրորդ՝ **«Հարկաբյուջետային քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում հետազոտությունները կենտրոնացել են ՀՀ

[4] Laurens, B. and De La Piedra, E., 1998, Coordination of Monetary and Fiscal Policies. IMF working paper wp/98/25. Pp. 5-7

հարկաբյուջետային համակարգի, մակրոտնտեսական փոփոխականների վերլուծության և ՀՀ-ում առաջիկա տարիներին հարկաբյուջետային համակարգի բարեփոխումների հիմնական ուղղություններին: Կիրառելով էկոնոմետրիկ վերլուծության VAR մոդելները՝ ուսումնասիրվել են հարկաբյուջոտային քաղաքականության տարբեր սցենարներ՝ գնահատելու արդյունավետ ֆիսկալ քաղաքականության իրականացման համար առաջնային ուղղությունները:

Գծապատկեր 1. ՀՀ ներքին և արտաքին պետական պարտքը և պարտքի սպասարկման տոկոսը (մլն. ԱՄՆ դոլար, 2007-2018թթ.)

Ուսումնասիրվել են հարկաբյուջետային համակարգի ցուցանիշների դինամիկան վերջին տարիներին, բացահայտվել են մակրոտնտեսական համակարգի վրա հիմնական սպառնալիքները և ռիսկերը, միջնաժամկետ կայուն տնտեսական աճը խոչընդոտող հիմնական ֆիսկալ ցուցանիշները, որի արդյունքում ներկայացվել է ՀՀ հարկաբյուջետային համակարգի կայունության բարելավման և առաջիկա բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ ուղղությունները: Վերջին 20 տարիների ՀՀ ֆինանսական համակարգի վիճակագրական ցուցանիշների համակողմանի վերլուծությունների արդյունքում ներկայացրել ենք այն հիմնական ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ հարկաբյուեետային քաղաքականության հետագա կայունության վրա, ինչպիսիք են պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը, բյուջետային ծախսերի մեջ պարտքի սպասարկման բաժինը (2018թ,՝ 9.6%), դեֆիցիտ/ՀՆԱ ցուցանիշը և այլն (Տ՛ես Գծապատկեր 1):

Գծապատկեր 2. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ (%), 2007-2017թթ.



Պետության ֆիսկալ կայունությունը և մասնավորապես պարտքի վճարունակության ռիսկերը գնահատելու համար անհրաժեշտ է նաև գնահատել պոտենցիալ ՀՆԱ-ն: Պետական հատվածի դիրքը և միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը տնտեսությունում չափվում է հիմնականում կառավարության ծախսերի, եկամուտների և դեֆիցիտի ծավալով (պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ): Մասնավորապես, ինչպես երևում է Գծապատկեր 2-ից՝ ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության ցուցանիշը 2007-2017թթ. եղել է 16%-22.4%-ի սահմաններում, իսկ համաձայն 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսսերի ծրագրի այդ ցուցանիշը կտատանվի 23.4%-23,6%-ի սահմաններում՝ գրանցելով փոփոխության չնչին միտում: Միևնույն ժամանակ, ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի հարաբերակցության ցուցանիշը 2007-2017թթ. եղել է 18.2%-25.2%-ի սահմաններում, և համապատասխանաբար 2018-2020 թթ. այդ ցուցանիշը պլանավորվում է պահպանել ՀՆԱ-ի 26.1%-25.7%-ի սահմաններում :

Այսպիսով, ինչպե՞ս են հարկային կրճատումներն ազդում տնտեսության վրա: Որքանո՞վ է կարևոր, թե արդյո՞ք դրանք ֆինանսավորվում են ծախսերի համապատասխան կրճատումներով թե պետական պարտքի համապատասխան աճով, և համեմատած որ հարկային կրճատումների սցենարի հետ: Այս հարցերը կարևոր նշանակություն ունեն տնտեսագիտության և առհասարակ հարկաբյուջետային քաղաքականության մշակման համար: Ատենախոսության այս գլխում պատասխանել ենք այս կարևոր հարցերին՝ առաջարկելով և կիրառելով VAR մոդելները որպես հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները բացահայտելու մեթոդ:

Մենք օգտագործում ենք VAR մոդելը հետևյալ փոփոխականների նկատմամբ. իրական ՀՆԱ, մասնավոր սպառում, ընդհանուր պետական ծախսեր, ընդհանուր պետական եկամուտներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, տոկոսադրույքի

մակարդակ, արդյունաբերողների գների ինդեքս և ՀՆԱ դեֆլյատոր: VAR համակարգը բաղկացած է այս 8 փոփոխականներից՝ եռամսյակային հաճախականությամբ 1997-2017թթ (միչև 2017թ, առաջին երկու եռամսյակները), կազմված է 6 լագից, առանց հաստատուն կամ ժամանակային տրենդի և օգտագործում ենք լոգարիթմը բոլոր փոփոխականների համար՝ բացառությամբ տոկոսադրույքի, ՀՆԱ-ի դեֆլյատորի, օտարերկրյա ուղղակի ներդրումների և արդյունաբերողների գների ինդեքսի, որտեղ մենք օգտագործել ենք մակարդակը:

Հարկաբյուջետային քաղաքականության ցնցումների բացահայտման ժամանակ հետագա բարդ և լավ հասկանալի մարտահրավերը ֆիսկալ քաղաքականության փոփոխությունների հայտարարման և դրանց կատարման միջև հնարավոր լագերի առկայությունն է: Հաշվի առնելով օրենսդիր մարմիններում պոտենցիալ երկարատև քննարկումները, օրինակ, հարկերի դրույքաչափերի կրճատումը, ապա պետական եկամուտների փոփոխությունը բավականին կանխատեսելի է, երբ հարկերի կրճատումն իրականում ուժի մեջ է մտնում: Հեռատես անհատները և ընկերությունները կարող են իրենց տնտեսական որոշումները կարգավորել մինչև այդ օրը, և չնայած հարկային փոփոխություններն ի վերջո տեղի են ունենալու, ֆիսկալ քաղաքականության փոփոխության ազդեցությունը տեղի է ունենում ավելի շուտ: Մեր ներկայացված մոդելի նորարարական առավելությունը կայանում է նրանում, որ նույնականացման ընթացակարգը հեշտությամբ հարմարեցված է այս խնդիրը հաղթահարելու համար՝ անմիջականորեն որոշելով այնպիսի շոկ, որի համար ֆիսկալ քաղաքականության հայտարարություն և քաղաքականության համապատասխան փոփոխության իրականացման միջև առկա է ժամանակային լագ:

Հարկաբյուջետային քաղաքականության շոկերը հայտնաբերվում են միայն ֆիսկալ փոփոխականների իմպուլսային արձագանքների սահմանափակումներով և այն պահանջներով, որ դրանք ուղղահայաց են ինչպես գործարար պարբերաշրջանների ցնցումների, այնպես էլ դրամավարկային քաղաքականության ցնցումների նկատմամբ: Ընտրված VAR մոդելի շրջանակներում ուսումնասիրել ենք հարկաբյուջետային քաղաքականության երեք սցենար. կառավարության ծախսերի ավելացում, հարկերի կրճատում և կառավարության ծախսերի և հարկային եկամուտների ավելացում միաժամանակ: Նկարագրված հարկաբյուջետային քաղաքականության սցենարները համեմատելու, և դրանց հետևանքներն արձանագրելու համար արդյունավետ մոտեցում է համարում որոշել յուրաքանչյուր ֆիսկալ սցենարի հետևանքների ամփոփ նկարագիրը: Գրականության մեջ կիրառված մեթոդներից մեկը դա որոշակի ժամանակահատվածում ՀՆԱ-ի արձագանքի գործակցի հարաբերությունն է ֆիսկալ փոփոխականի սկզբնական ցուցանիշի հետ: Մենք այն անվանում ենք ազդեցության մուլտիպլիկատոր: Մուլտիպլիկատորի ներկա արժեքը հաշվարկելու համար մենք օգտագործում ենք հետևյալ բանաձևը[5]՝

[5] Canova F, Pappa E. 2007. Price differentials in monetary unions: the role of fiscal shocks. Economic Journal 117: 713–737.

$$\textit{Մուլտիպլիկատորի ներկա արժեք} = \frac{\sum_{j=0}^{k}(1+i)^{-j}y_j}{\sum_{j=0}^{k}(1+i)^{-j}f_j}\frac{1}{f/y}$$

որտեղ y_j ՀՆԱ-ի պատասխանն է j-երորդ ժամանակահատվածում, f_j ֆիսկալ փոփոխականի պատասխանն է j-երորդ ժամանակահատվածում, i-ն միջին տոկոսադրույքն է, f/y-ն դա ֆիսկալ փոփոխականի միջին մասնաբաժինն է ՀՆԱ-ի նկատմամբ: Բոլոր դեպքերում մենք օգտագործում ենք միջին մուլտիպլիկատորներ[6]:

Աղյուսակ 1: Հարկաբյուջետային քաղաքականության սցենարների ժամանակ ազդեցությունների մուլտիպլիկատորների արդյունքները

Ֆիսկալ քաղ. սցենարը	Ֆիսկալ քաղ. փոփոխականը	1եռ.	4եռ.	8եռ.	12եռ.	20եռ.
Կառավարության ծախսերի ավելացում	ՀՆԱ	0.34	0.39	-0.13	-0.24	-0.03
	Հարկային եկամուտներ	0.00	0.00	-0.25	-0.38	-0.33
	Կառավարության ծախսեր	1.00	1.00	0.9	0.6	0.3
Հարկերի նվազեցում	ՀՆԱ	0.21	0.52	1.83	2.03	2.33
	Հարկային եկամուտներ	-1.00	-1.00	0.33	1.00	1.06
	Կառավարության ծախսեր	0.00	0.00	0.33	0.38	0.46
Կառավարության ծախսերի ու եկամուտների ավելացում միաժամանակ	ՀՆԱ	0.11	0.32	-0.21	-0.25	0.23
	Հարկային եկամուտներ	0.00	0.05	-0.02	-0.11	0.21
	Կառավարության ծախսեր	0.00	-0.09	0.22	0.11	0.15

Այսպիսով, հետազոտությունում նկարագրված հարկաբյուջետային քաղաքականության սցենարների արդյունքում ամփոփված մուլտիպլիկատիվ ազդակները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Համեմատելով ստացված արդյունքները՝ պարզ է դառնում, որ կառավարության ծախսերի ավելացումն առաջին և երրորդ սցենարների պարագայում արտամղման ազդեցություն են ունենում մասնավոր ներդրումների վրա՝ արդյունքում նվազեցնելով տվյալ քաղաքականությունների արդյունավերտությունը: Իսկ հարկերի կրճատման սցենարի պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունն առաջին 4 եռամսյակներում էականորեն չի խթանում տնտեսությունը, սակայն, հետագայում համեմատած մյուս սցենարների դրականորեն է ազդում ՀՆԱ-ի աճի տեմպի վրա:

Այս հետազոտությունում մենք ներկայացրեցինք նոր մոտեցում՝ բյուջետային քաղաքականության ցնցումների հետևանքները տարբերելու և վերլուծելու համար՝ Ուհլիգի (2005) մեթոդի հետ համապատասխանեցմամբ: Մենք ակնհայտորեն թույլ

[6] Mountford, A., and H. Uhlig (2005). "What Are the Effects of Fiscal Policy Shocks?" SFB 649 Discussion Paper 2005-039. Humboldt University, Berlin, pp. 1-40

ենք տալիս հնարավորություններ արձագանքման ազդեցություններին, այսինքն՝ ներկայիս հարկաբյուջետային քաղաքականության շոկը ապագայում է փոփոխում ֆիսկալ քաղաքականության փոփոխականները, բայց ոչ ներկայում: Այն հաղթահարում է նաև քաղաքականության լագերի հիմնախնդիրը: Մասնավորապես, մեր նույնականացման ընթացակարգը հեշտությամբ հարմարեցված է այս խնդիրը հաղթահարելու համար՝ անմիջականորեն որոշելով այնպիսի շոկ, որի համար ֆիսկալ քաղաքականության հայտարարություն և համապատասխան փոփոխությունների իրականացման միջև առկա է ժամանակային լագ: Այս մեթոդն օգտագործում է միայն ավտոռեգրեսիվ վեկտորային մակրոտնտեսական ժամանակային շարքերը՝ նվազագույն ենթադրությունների հետ միասին, որոշելու հարկային քաղաքականության ցնցումները: Մասնավորապես, այն չի սահմանափակում ուսումնասիրություններն առանցքային փոփոխականների (տոկոսադրույքներ, ՀՆԱ, մասնավոր սպառումն, իրական աշխատավարձի և մասնավոր ներդրումներ) ազդակների արձագանքներին՝ հարկաբյուջետային քաղաքականության ցնցումների նկատմամբ: Ամփոփելով կարող ենք նշել, որ տվյալ մոտեցումը տարբերվում է ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության հետևանքների վերաբերյալ նախորդ ուսումնասիրություններից և կարող է պրակտիկ կիրառություն ունենալ ՀՀ-ում միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության պլանավորման ժամանակ, և այն ապահովում է հետազոտությունների մի կարևոր լրացուցիչ մեթոդ հարկաբյուջետային գործիքների ազդակների բացահայտման համար:

Ատենախոսությունը եզրափակվում է **եզրակացություններով**, որտեղ ներկայացվել են հետևյալ եզրակացությունները.

1. Հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է շատ խայտաբղետ անցյալ: Քեյնսի հեղափոխական տեսական մոտեցումը և մասնավորապես 1936 թվականիին լույս տեսած «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունը կարևոր տեղ է ստեղծել հարկաբյուջետային քաղաքականության համար, այն տեղը, որը հետագայում քանդվել է գերիշխող տեսության կողմից: Եվ մինչ հիմնական տեսությունը փորձում էր հարկաբյուջետային քաղաքականության համար ապահովել որոշակի դեր, հետքեյնսյան տնտեսագետները երկար ժամանակ պայքարում էին քեյնսյան գաղափարների համար:
2. Վերջին տարիներին տնտեսական քաղաքականություն մշակողների և տնտեսագետների շրջանակներում հարկաբյուջետային քաղաքականությանը կարևոր դեր է վերագրվել, որպես պետության կողմից տնտեսության կարգավորման կարևորագույն լծակ: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով. մասնավորապես, այն փաստը, որ հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսական նոր կոնսենսուսում վերականգնում իր ունեցած առաջնային դերը, վկայում է այն մասին, որ տնտեսագետների մոտ վերացել է ֆիսկալ գործիքների արդյունավետության նկատմամբ թերահավատության հարցը: Այնուամենայնիվ, որքանով որ տնտեսական նոր կոնսենսուսը ֆիսկալ քաղաքականության համար վերականգնում է որոշակի դեր, դա ո՛չ գերիշխող դեր է, և ո՛չ էլ պարզ է, թե ինչում է կայանում այդ դերը: Բացի այդ, ինչպես ցույց տվեց

վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը, դրամավարկային քաղաքականությունը միայնակ չկարողացավ լուծել տնտեսությունների առջև ծառացած ճգնաժամային հիմնախնդիրները: Ուստի, այս պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունն աստիճանաբար վերականգնում է տնտեսական կարգավորման դիրքերը:

3. Համապատասխան համակարգման մեխանիզմների և դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացման մեխանիզմների ստեղծումը վերջնական նպատակների իրականացման նախապայմանն է երկու ոլորտների քաղաքականություն մշակողների համար, քանի որ այլ կերպ առանձին քաղաքականություն և փոխադարձ հակասող նպատակներ իրականացնող մարմինները կարող են առաջացնել տարամետ մակրոտնտեսական միտումներ: Ուստի, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների միջև կոորդինացման բացակայությունը կհանգեցնի ընդհանուր տնտեսական արտադրողականության վատթարացմանը:

4. Ատենախոսությունում կատարված ուսումնասիրություններից և վերջին տարիներին ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների և հարկաբյուջետային քաղաքականության բնույթի վերլուծություններից պարզ է դառնում, որ տնտեսական քաղաքականություն մշակողները լուրջ քայլեր պետք է ձեռնարկեն տնտեսական կայունության և երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար: Մասնավորապես, համապատասխան հարկաբյուջետային քաղաքականությունը, որը տնտեսական անկումների համար պետք է լինի հիմնական պատասխանը, կախված է մի շարք գործոններից և կարող է որոշել, թե տվյալ պայմաններում համապատասխանում է հարկաբյուջետային ընդլայնումը, թե կոնսոլիդացիան: Այս տեսանկյունից հիմնական նկատառումները, որոնք պետք է հաշվի առնեն քաղաքականություն մշակողները, հետևյալներն են.

- Արդյո՞ք ֆիսկալ գործիքների օգտագործումը տվյալ պահին նպատակային է և արդարացված, թե ոչ, և ի՞նչ հետևանքներ այն կունենա պետական պարտքի կառավարման կայունության վրա: Հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնողները պետք է ուսումնասիրեն ֆիսկալ գործիքների ռիսկերը մինչև դրանց իրականացումը և գնահատեն տնտեսական ակտիվության վրա այդ գործիքների արդյունքները՝ միևնույն ժամանակ չմոռանալով, թե ինչ ազդեցություն կարող է այն ունենալ պետական պարտքի կայունության վրա:
- Բացահայլտել, թե ի՞նչ համադրություն պետք է ունենա հարկաբյուջետային ընդլայնումը կամ կոնսոլիդացիան: Ծախսերի աճը հակված է ունենալ ավելի մեծ ֆիսկալ մուլտիպլիկատիվ ազդեցություն՝ համեմատած հարկային կրճատումների հետ: Բացի այդ, ծախսային և հարկային լծակներով պայմանավորված միջոցառումները, որոնք առաջարկի վրա ցանկալի ազդեցություն ունեն, կարող են կարճաժամկետ դրական ազդեցություն ունենալ՝ պայմանավորված սպասումներով: Կարևոր է նաև գնահատել արտադրողական և անարդյունավետ ծախսերի միջև տարբերությունը:
- Եվ վերջում, պարզել, թե ի՞նչն է ազդում տնային տնտեսությունների և ֆիրմաների վարքագծի վրա: Հավանաբար, սա ամենակարևոր գործոողություններից մեկն է, միևնույն ժամանակ այն ուղղությունները, թե

խնայողությունները և ներդրումներն ինչպես են արձագանքում հարկաբյուջետային ընդլայնմանը կամ կոնսոլիդացիային, կարող են նշանակալիորեն պայմանավորված լինել իրացվելիության խոչընդոտներով, որը մեծ նշանակություն ունի տնային տնտեսությունների և ֆիրմաների համար որոշումների կայացման ժամանակ:

5. ՀՀ-ում հարկային բարեփոխումների ընթացքում քաղաքականություն մշակողները պետք է հստակեցնեն հարկային քաղաքականության հիմքում դրվող հիմնական սկզբունքները, որոնք պետք է լինեն ամբողջ տնտեսական քաղաքականության գաղափարախոսության հիմքում: Մասնավորապես՝ հարկային քաղաքականության հիմքում դրվող հիմնական սկզբունքները հետևյալներն են.

- Արդյոք երկարաժամկետ, թե կարճաժամկետ տնտեսական աճն է նպատակադրված հարկային քաղաքականության մեջ: Եթե դա երկարաժամկետ տնտեսական աճն է, ապա տնտեսագետների ու հարկաբյուջետային քաղաքականության մշակողների համար կարևոր է ուշադրություն դարձնել, թե որ ոլորտներից են նախատեսում ապահովել ցանկալի տնտեսական աճը:
- Տնտեսական աճ ապահովելու համար ի՞նչ մոդել ենք նախատեսում՝ պահանջարկով, թե առաջարկով պայմանավորված: Եթե նախընտրում ենք առաջինը, ապա պետք է հաշվի առնել, որ մեր երկրի փորձն արդեն իսկ ցույց է տվել, որ դա կայուն գործիք չէ տնտեսական աճի համար սահմանված նպատակներին հասնելու համար: Սակայն, ներկա տնտեսական զարգացումների պայմաններում, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ցանկացած զարգացող երկրում տնտեսական աճի ապահովման միայն զուտ պահանջարկով, կամ զուտ առաջարկով պայմանավորված որևէ մոդել ժամանակակից տնտեսական կյանքում չի կարող կիրառվել, ուստի առավել արդյունավետ և կիրառելի մոդելը հենց դրանց զուգակցված ձևով կիրառումն է:
- Արդյո՞ք մենք թիրախավորում ենք կարճաժամկետ, թե երկարաժամկետ տնտեսական կայունությանը: Կարևոր է ընդգծել, որ այս պարագայում հարկային դրույքաչափերի կամ հարկերի կառուցվածքի փոփոխությունները կազդեն հարկատուների տնտեսական գործունեության և երկարաժամկետ կայունության վրա:
- Եթե քաղաքականության մշակողներն անցնում են դեպի սպառման հարկմանը, ապա անպայմանորեն անհրաժեշտ է քաղաքականության պլանավորման ժամանակ հաշվի առնել հարկերի սոցիալական հետևանքները:

6. Ատենախոսությունում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության VAR մոդելի շրջանակներում ուսումնասիրվել են հարկաբյուջետային քաղաքականության երեք սցենար. կառավարության ծախսերի ավելացում, հարկերի կրճատում և կառավարության ծախսերի ու հարկային եկամուտների ավելացում միաժամանակ: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականության լավագույն սցենարը դեֆիցիտը ֆինանսավորվող հարկային կրճատումներն են: Այս հետազոտությունում ընդգծվում է, որ բարձր պարտքի բեռը կարող է ունենալ երկարաժամկետ բացասական հետևանքներ, որոնք շատ ավելի բացասական հետևանքներ կառաջացնեն՝ քան ՀՆԱ-ի կարճաժամկետ աճը կկարողանա մեղմել: Այս նորմատիվ դատողությունները պահանջում են միաժամանակ տեսական

հիմնավորումներ, որոնց համար ներկայացված էմպիրիկ դրական արդյունքները կարող են օգտակար ելակետ լինել:

Հիմք ընդունելով ատենախոսության արդյունքները և համապատասխան եզրակացությունները՝ կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1. *Հարկային քաղաքականության բնագավառում անհրաժեշտ բարեփոխումները.*

- Հարկային բազայի ընդլայնումը, հարկերի ազատման և արտոնյալ ռեժիմների ռացիոնալացման միջոցով, կբարձրացնի եկամուտները և կնպաստի հորիզոնական հավասարությանը:
- Եկամուտների կառավարման բարելավումը՝ ներառյալ ռիսկերի կառավարման մեթոդների ներդրման, օրենքների պարզեցման և հարկ վճարողների և գործառնությունների սեգմենտավորման միջոցով, որոնք կարող են ամրապնդել հարկ վճարողների պատրաստակամությունը և բարձրացնել եկամուտների հավաքագրումը:
- Հարկերի կառուցվածքի փոփոխումը՝ պայմանավորված տնտեսական արդյունավետության բարձրացման հետ. մասնավորապես ուղղակի և անուղղակի հարկերի կառուցվածքի այնպիսի փոփոխությունները, որոնք առավել քիչ ազդեցություն կունենան տնտեսվարողների իրական եկամուտների նվազման և գնաճի վրա: Գույքի կամ հարստության հարկերը նույնպես կարող են նպաստել հարկային համակարգի պրոգրեսիվության բարձրացմանը:
- Զարգացող երկրները, որոնք բարդություններ են հանդիպում ֆիսկալ տիրույթի ընդլայնման ժամանակ, պետք է կենտրոնանան այնպիսի բարեփոխումների վրա, որոնք բյուջետային կայունության առումով չեզոք ազդեցություն կունենան ֆինանսական համակարգի վրա:
- Առավել արդյունավետ երկարաժամկետ հարկային միջոցառումներ ձեռնարկել, պարտքի միջոցով ֆինանսավորման փոխարեն:
- Ֆինանսական կայունության ապահովման համար անհրաժեշտ է նախապես հայտարարված ոլորտային ռազմավարությունների մշակում և ներկայացում:
- ՀՀ-ում ՕՈՒՆ-երի ներգրավման ծավալների մեծացման համար անհրաժեշտ քայլ պետք է հանդիսանա մեր երկրի տնտեսության ռազմավարական հիմնական ուղղությունների համար նպաստավոր հարկային դրույքաչափերի սահմանումը, հարկային հետաձգումների՝ հարկային «արձակուրդների» մեխանիզմների ներդրումը, որոնք ևս առաջնային խթան կհանդիսանան տվյալ ճյուղերում ֆինանսական ռեսուրսների ծավալների մեծացմանը:

2. *Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ուղղությամբ անհրաժեշտ փոփոխությունները.*

- սահմանել հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ներդաշնակ և փոխադարձ համաձայնեցված թիրախներ՝ ոչ գնաճային, կայուն տնտեսական աճ ապահովելու նպատակով,
- հարկաբյուջետային քաղաքականությունը չպետք է հանդիսանա գնաճի հիմնական աղբյուրը, միևնույն ժամանակ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը պետական բյուջեի վրա պետք է փոքր լինի,
- նպաստել քաղաքականության որոշումների արդյունավետ իրականացմանը

հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների սահմանված նպատակներին հասնելու համար՝ տեղեկատվության փոխադարձ փոխանակման և նպատակաուղղված քննարկումների միջոցով,

- ստիպել Կենտրոնական բանկին և կառավարությանը կայուն քաղաքականություն վարել:

3. Հարկաբյուջետային համակարգի բարեփոխումները պետք է սկսվեն մակրոտնտեսական մակարդակում հուսալի քաղաքականության ձևավորմամբ՝ ներառյալ պետական կարգավորման և կառավարման շրջանակները, հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմները և մակրոտնտեսական քաղաքականությունը:

4. Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն որպես ընդհանուր ռազմավարության մաս, որը պետք է լինի համապատասխան երկրի կառավարմանը և մարտահրավերներին: Դոնորները կարող են նպաստել դրամական միջոցների, գաղափարների և տեխնիկական հմտությունների զարգացմանը և բարեփոխումներին աջակցելով ռազմավարությունները բարելավմամբ, սակայն բարեփոխումների կոնկրետ ռազմավարությունը պետք է համապատասխանեցված լինի տվյալ երկրի ընդհանուր քաղաքականությանը և տնտեսական մարտահրավերներին: Կառավարության ինտերակտիվ մասնակցությունը բիզնեսի, քաղաքացիական հասարակության, և տարբեր քաղաքական գործընթացներին կստանա կոնկրետ ռազմավարության վստահությունը:

5. Պետական ֆինանսների համակարգի բարեփոխումները պետք է ամրապնդվեն բարձր մակարդակի քաղաքական պարտավորությամբ և պետք է երկարաժամկետ ու շարունակական աջակցություն ունենան: Ֆինանսական բարեփոխումն առաջին հերթին քաղաքական գործընթաց է՝ ենթադրելով քաղաքական ծախսեր և օգուտներ: Որպես այդպիսին, այն պահանջում է խորաթափանց քաղաքական կառավարում և կամք:

6. Ատենախոսությունում ներկայացված VAR մոդելի միջոցով իրականացված հետազոտության և ներկայացված ֆիսկալ սցենարների շրջանակներում կանխատեսվել են համապատասխան ֆիսկալ գործիքների կիրառման արդյունավետությունը միջնաժամկետ հեռանկարում, որի արդյունքում էլ ներկայացվել է հարկաբյուջետային քաղաքականության ամենաարդյունավետ ուղղությունները ՀՀ-ում առաջիկա տարիներին իրականացման համար:

7. Միևնույն ժամանակ վերոնշյալ VAR մոդելի կիրառման միջոցով ներկայացվել է ՀՀ տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության տարբեր սցենարների գնահատման մեխանիզմ, որի արդյունքում դեֆիցիտը ֆինանսավորվող հարկային կրճատումների սցենարը եղել է կարճաժամկետ հատվածում, միևնույն ժամանակ միջնաժամկետ հեռանկարում տնտեսական լավագույն ցուցանիշներ երաշխավորող ուղղություն: Արդյունքում, հետազոտությունում ընդգծվում է, որ դեֆիցիտը ֆինանսավորող անսպասելի հարկային կրճատումների քաղաքականությունը ֆիսկալ համակարգի վրա ունենում է ամենացանկալի ազդեցությունը՝ միաժամանակ տնտեսական աճի համար նպաստավոր հիմքեր ստեղծելով միջնաժամկետ հեռանկարում:

8. Ամենամյա բյուջետային պլանավորման ընթացքում ծախսերի կանոնի

սահմանումը կօգնի արդյունավետորեն արձագանքել հարկաբյուջետային քաղաքականության համացիկլայնությանը և առավել խիստ ուշադրության կենտրոնում պահել այն, ինչը կարճաժամկետ հատվածում կառավարությունը վերահսկում է: Նման ծախսային կանոնը համապատասխան ծախսերի աճի հնարավորություն կտա՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին, և միևնույն ժամանակ տնտեսական կայուն ժամանակներում որոշակի մակարդակում կզսպի ծախսերի աճը՝ խրախուսելով ավելի ապագայամետ և ռացիոնալ կարգապահություն հարկաբյուջետային քաղաքականության իրագործման ընթացքում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Մաճկալյան Ա., «Ծրագրային բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ բարեփոխումները ՀՀ-ում», Հանրային կառավարում գիտական հանդես, Երևան 2015, N1, էջ 83-90.
2. Matshkalyan A., “The Effectiveness of Fiscal Policy: Keynesian Approach and Crowding Out”, The journal “Bulletin of Armenian National Agrarian University”, 2017, V.1, p 84-86
3. Matshkalyan A., Feher A.,” Financial Instruments of European Union Stimulating Rural Development”, “Management Agricol” scientific journal, Vol 19, No 2 (2017), p. 95-100
4. Aghajanyan H., Matshkalyan A., “The Macroeconomic Effects of Fiscal Policy (theoretical background)”, The journal “Bulletin of Armenian National Agrarian University”, 2017, V.4, p 153-156.
5. Matshkalyan A., “The Role of Fiscal Policy in The Long-Term Economic Growth”, The journal “Bulletin of Armenian National Agrarian University”, 2017, V.4, p. 156-159.
6. Էլբակյան Տ., Մաճկալյան Ա., ««Հոլանդական հիվանդության» էությունը, առկայությունը ՀՀ տնտեսությունում և հարկաբյուջետային քաղաքականության պատասխանը», «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2018, N1, էջ 80-86.
7. Matshkalyan A., “Challenges of public financial management reforms in developing countries”, The journal “Bulletin of Armenian National Agrarian University”, 2018, V.1, pp.128-131.
8. Matshkalyan A., Elbakyan T., “The impact of taxation on the economic development in Armenia”, The journal “Bulletin of Armenian National Agrarian University”, 2018, V.1, pp.131-134.

МАЧКАЛЯН АРТАШЕС ВАГАНОВИЧ

ПРОБЛЕМЫ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКИ (ТЕОРЕТИЧЕСКИЕ-МЕТОДОЛОГИЧЕСКИЙ ВОПРОСЫ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – “ Общая экономика ”.

Защита диссертации состоится 25 декабря 2018 года, в в 13:30 часов, на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

На современном этапе развития экономической мысли вопросы фискальной политики стали одним из центральных и основных проблем экономических исследований. В текущем анализе экономической литературы основное внимание уделяется фискальной политике, обусловленной текущими вызовами развития рыночной экономики и роли фискальной политики государства в регулировании бизнес-циклов. В текущем периоде экономических исследований аналитики-теоретики все чаще проявляют интерес к исследованиям по вопросам фискальной политики в связи с новой ролью этой политики в новом экономическом консенсусе, что делает необходимым проанализировать эффективность использования фискальных инструментов во время экономических кризисов, а также необходимость выявлять новые механизмы их координации с денежно-кредитной политикой и их применения.

Следует также отметить, что последствия глобального финансово-экономического кризиса и возникший фискальный спад показали, что фискальные рычаги экономического регулирования на современном этапе глобального экономического развития более актуальны, чем когда-либо. После 2009 года кризис оставил негативные последствия для экономики Армении и в частности, в фискальной среде. В результате этого восстановление макроэкономической стабильности и устойчивый экономический рост стали основными целями бюджетной политики в последние годы.

Для достижения поставленных целей в исследовании были выдвинуты следующие задачи:

- Изучение теоретических подходов к фискальной политике и выявление роли фискальной политики в новом экономическом консенсусе.
- Анализ макроэкономических эффектов фискальной политики и оценка эффективности политики в рамках изучения разных экономических школ.
- Изучение реформ налогово-бюджетной политики в развивающихся странах и разъяснение механизмов координации с денежно-кредитной политикой.
- Анализ показателей, характеризующих фискальную политику и фискальную систему Армении.

- Оценка эффективности фискальной политики Армении с помощью моделирования VAR по методологии ограничения импульсов и представление соответствующих фискальных реформ.

В итоге научного исследования были получены результаты, имеющие теоретическую, практическую и методологическую значимость, в числе которых в качестве научной новизны можно различать следующие:

- В результате параллельного анализа различных экономических теорий и исследований фискальной политики были разделены и уточнены современные концепции фискальной политики государства. В то же время, принимая во внимание недавние экономические изменения и изменения в соотношении макроэкономических регулирующих инструментов государства, был поднят вопрос о пересмотре роли фискальной политики в новом экономическом консенсусе.
- В целях обеспечения низкой инфляции, устойчивого экономического роста, была представлена основная логика координации фискальной и денежно-кредитной политики, а также институциональные и практические механизмы, которые должны основываться на политике, разработанной Центральным банком и Правительством Республики Армения, для обеспечения отсутствия отличительных макроэкономических тенденций и наличия гармоничных и взаимосогласованных целей.
- Выявив основные проблемы и приоритеты фискальной системы для развивающихся стран за последние годы, были представлены основные направления развития налоговой политики и дальнейшие реформы в Армении, приоритеты и предпосылки для эффективного осуществления политики.
- Внедряя исследование фискальных и налоговых показателей Армении, основные направления фискальной экспансии и/или консолидации, основные макроэкономические риски и эффективность фискальных инструментов, была спрогнозирована эффективность применения фискальных инструментов в среднесрочной перспективе.
- При помощи принятого в международной практике эконометрического анализа моделирования VAR были представлены и оценены разные сценарии налогово-бюджетной политики РА, направленные на выявление основных направлений курса, необходимого для обеспечения среднесрочного стабильного экономического роста. В частности, в рамках выбранной модели, для выявления вышеупомянутой проблемы был применен подход по ограничению фискальных импульсов.

Результаты исследования могут быть применены в процессе разработки и применения налогово-бюджетной политики в Армении, а также в рамках текущих системных реформ. Результаты исследования могут также использоваться как в теоретическом и эмпирическом анализе, так и для будущих исследований фискальной политики.

MATSHKALYAN ARTASHES VAHAN

THE PROBLEMS OF FISCAL POLICY (THEORETICAL-METHODOLOGICAL ISSUES)

The abstract of the dissertation for pursuing the PhD degree of Economics in the field of 08.00.01 – "General Economics".

The defence of the dissertation will take place at 13:30 on December 25, 2018 at the meeting of Specialized Council 015 in Economics of Supreme Certifying Commission of RA acting at the Yerevan State University. Adress: 52, Abovyan str., Yerevan, 0009.

SUMMARY

At the present stage of the development of economic thought, the issues of fiscal policy have become one of the central and basic problems of economic research. The current analysis of economic literature focuses on fiscal policy conditioned by the current challenges of developing a market economy and the role of fiscal policy of the state in regulating business cycles.

In the current period of economic research, theoretical analysts are increasingly interested in research on fiscal policy in connection with the new role of this policy in the new economic consensus, which makes it necessary to analyze the effectiveness of the use of fiscal instruments during economic crises, as well as the need for new coordination mechanisms with monetary policy and the main mechanisms for their implementation.

It should also be noted that the consequences of the global financial and economic crisis and the emerging fiscal recession have shown that the fiscal tools of economic regulation at the current stage of the global economic development are more relevant than ever. After 2009, the crisis left negative consequences on the Armenian economy and the fiscal environment. As a result, the restoration of macroeconomic stability and sustainable economic growth have become the main objectives of fiscal policy in recent years.

The following tasks have been put forward to achieve the goals in the study:

- Investigation of different theoretical approaches to fiscal policy and the role of fiscal policy in the new economic consensus.
- Analysis of macroeconomic effects of the fiscal policy and evaluation of the policy effectiveness in various theoretical approaches.
- Resarch on fiscal policy reforms in developing countries and explain mechanisms for coordination with monetary policy.
- Analysis of the indicators characterizing the fiscal policy and the fiscal system of Armenia.
- Evaluation of the effectiveness of fiscal policy through the VAR models on the contemporary methodology of sign restrictions in Armenia and the presentation of

appropriate fiscal reforms.

As a result of the scientific research, outcome was obtained that have theoretical, practical and methodological significance, among which the following can be distinguished as scientific novelty:

- As a result of a parallel analysis of various economic theories and studies of fiscal policy, modern concepts of fiscal policy of the government were divided and refined. At the same time, taking into account recent economic changes and changes in the ratio of macroeconomic regulatory instruments of government, the issue of revising the role of fiscal policy in the new economic consensus was raised.
- In order to ensure low inflation, sustainable economic growth, the basic logic of coordination of fiscal and monetary policy and institutional and practical mechanisms was presented, which should be based on policies developed by the Central Bank and the Government of the Republic of Armenia to ensure the absence of distinctive macroeconomic trends and the existence of harmonious and mutually agreed goals.
- Having identified the main problems and priorities of the fiscal system for developing countries in recent years, the main directions of tax policy development and further reforms in Armenia, priorities and prerequisites for effective fiscal policy implementation were presented.
- Introducing the study of fiscal and tax performance in Armenia, the main directions of fiscal expansion and/or consolidation, the main macroeconomic risks and the effectiveness of fiscal instruments were predicted in the long term to ensure economic stability and long-term economic growth.
- Using the the VAR model of econometric analysis adopted in the international experience, Armenia's fiscal policy was presented and evaluated in various scenarios to identify key areas for ensuring medium-term sustainable economic growth. In particular, within the framework of the chosen model, the approach of limiting fiscal impulses was applied.

The results of the investigation can be applied in the process of developing and applying fiscal policy in Armenia, as well as in the framework of ongoing systemic reforms. The results of the research can also be used in the theoretical and empirical analysis, at the same time for future studies of fiscal policy.